ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ I ՍԱՏՐԱՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՇՈՒՐՋ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ

Հերոդոտոսի համաձայն՝ «հոնիացիներից, Ասիայի մագնեսյաններից, էոլյաններից, կարիացիներից, լյուկիացիներից և միլյուացիներից և պամփյուլիացիներից, քանի որ նրանց բոլորի համար սահմանվել էր մեկ ընդհանուր հարկ, ստացվում էր չորս հարյուր տաղանդ արծաթ: Այս էլ Դարեհը հաստատեց որպես առաջին նահանգ»[1]: Այս բազմազգ սատրապության մեջ մտնող ժողովուրդներից, ցեղերից և քաղաքներից յուրաքանչյուրի նկատմամբ պարսից արքունիքը վարում էր վարչական այնպիսի քաղաքականություն, որը, ելնելով տեղական պայմաններից և պետության շահերից, պարբերաբար ենթարկվում էր կառուցվածքային փոփոխությունների: Ստորև կքննենք մագնեսյաններին, էոլիացիներին կամ էոլյաններին, միլյուացիներին և պամփյուլիացիներին վերաբերող անտիկ աղբյուրների այն տեղեկությունները, որոնք վերաբերում են Աքեմենյան տերության սատրապական բաժանման համակարգին:

Մագնեսյաններ*: Մագնեսյանների առանձին հիշատակվելը I սատրապության կազմում հետաքրքիր է այն առումով, որ վերջինիս հետ Աքեմենյան արքաները, ըստ էության, ունեցել են քաղաքական հարաբերությունների այնպիսի ձև՝ «անձնական ունիա», որը թույլ է տվել մագնեսյաններին որպես առանձին վարչական միավոր ներառվել սատրապության կազմում: Մագնեսիա քաղաքը, որը գտնվում էր Մեանդրոսի հովտում[2], Մեանդրոսի վտակ Լեթայոսի ափին, Թորաքս լեռան ստորոտին[3], նվաճում է մեդացի Մազարեսը[4]: Այլ մանրամասներ Հերոդոտոսը չի հաղորդում:*

Հերոդոտոսի տեղեկություններից պարզվում է, որ Փռյուգիայի, Լյուդիայի և Հոնիայի սատրապ Օրոյտեսի նստավայրը Մեանդրոսի Մագնեսիան էր[5]: Արտաքսերքսես Ա-ն Մագնեսիան՝ որպես «հաց», տալիս է Թեմիստոկլեսին[6]: Պլուտարքոսն ավելացնում է ևս երկու քաղաք՝ Լամպսակոսը՝ որպես «գինի», և Միունտը՝ որպես «ձուկ»[7]: Ստրաբոնը հայտնում է, որ Մագնեսիան գրավել է

---

[1] *Տե՛ս Հ ե ր ո դ ո տ ո ս. Պատմություն ինը գրքից (այսուհետև՝ Հ ե ր ո դ ո տ ո ս), թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986, III, 90:*

[2] P l i n y. Natural History, vol. II (*այսուհետև* 'P l i n y), with an English translation by H. Rackham, Cambridge–Massachusetts–London, 1947, Loeb Classical Library, XXXI, 114, p. 306.

[3] С т р а б о н. География в 17 книгах (*այսուհետև*՝ Страбон) пер., статья и комм. Г. А. Стратановского. Л., 1964, с. 605.

[4] *Հ ե ր ո դ ո տ ո ս, I, 161:*

[5] *Նույն տեղում, III, 122:*

[6] Ф у к и д и д. История (*այսուհետև*՝ Ф у к и д и д), пер. Ф. Г. Мищенко. М., 2012, с. 69, 423; Cornelius Nepos. London–Cambridge–Massachusetts, 1960, Loeb Classical Library, Themistocles, X, 2, p. 406; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, vol. II, Lipsiae, 1826, XI, 57, p. 59.

[7] П л у т а р х. Избранные жизнеописания (*այսուհետև*՝ П л у т а р х), т. I. М., 1987, с. 241.

Լյուդիայի թագավոր Գյուգեսը, և քաղաքը կործանվել տրերների կողմից մ. թ. ա. 650 թվականին: Տրերներից հետո Մագնեսիան նվաճում են նաև միլեթցիները[8]: Հետաքրքիր է, որ Մեանդրոսի Մագնեսիան հռոմեացիների տիրապետության ժամանակ հայտարարված էր ազատ քաղաք[9]: Ստրաբոնը նույնպես գրում է, որ Քսերքսեսը (իմա՛ Արտաքսերքսես Ա-ն) Թեմիստոկլեսին Մագնեսիան շնորհում է «հացի համար»[10]: Մագնեսիայի բնակիչները ծագումով Թեսալիայից և Կրետեից էին[11]: Մագնեսիան տեղադրվում է ներկայիս Թեքքե կամ Ինեկ-բազար վայրում[12]: Համաձայն Արիանոսի՝ Մագնեսիան ենթարկվում է Ալեքսանդր Մակեդոնացուն[13]:

Դասական աղբյուրների տեղեկությունների մեջ հատկապես կարևոր է Ստրաբոնի այն հաղորդումը, թե Մագնեսիան էոլական քաղաք է[14]: Ըստ էության, Մագնեսիայի կամ մագնեսյանների հիշատակվելը I սատրապության կազմում ցույց էր տալիս Մագնեսիայի յուրահատուկ կարգավիճակը, ինչով էլ պայմանավորված՝ այն հետագայում շնորհվում է Թեմիստոկլեսին: Սա կարող է նշանակել, որ Աքեմենյանների համար Մագնեսիան եղել է, այսպես կոչված, արքունի տիրույթ, որը ծառայության համար տրվում էր այս կամ այն անձին:

Էոլյաններ*: Էոլիացիները գաղթել են հետագայում հայտնի Թեսալիա և Բեոտիա մարզերից՝ սկզբում հաստատվելով Լեսբոս և Տենեդոս կղզիներում, ապա՝ Տրոադայի առափնյա շրջանում ու վերջինիցս արավ ընկած տարածքներում[15]: Էոլիսը և էոլիացիները էթնոլեզվական հասկացություններ են և չունեն քաղաքական կամ աշխարհագրական բովանդակություն: Համաձայն Պլինիոս Ավագի՝ Էոլիսը նախկինում կոչվել է Մյուսիա[16]:*

Էոլներին Հայաս գետից արևմուտք ընկած բազմաթիվ ժողովուրդների հետ նվաճում է Կրեսոսը[17]: Կյուրոս Մեծը Հելլեսպոնտոսյան Փռյուգիան և Էոլիսը հանձնում է Փառնուքոսի կառավարմանը[18], ինչը ցույց է տալիս վերջիններիս՝ մեկ վարչական միավորի մեջ լինելը: Հերոդոտոսը հիշատակում է էոլական տասնմեկ քաղաքները՝ Կյումե, որը կոչվում էր Փռիկոնիական, Լարի-

---

[8] С т р а б о н, с. 605–606.

[9] *Նույն տեղում, էջ 582:*

[10] *Նույն տեղում, էջ 595:*

[11] *Նույն տեղում, նաև՝ էջ 605: Քսենոփոնի հիշատակած մագնեսիացիները Թեսալիայից էին (տե՛ս Ք ս ե ն ո փ ո ն. Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970, էջ 138):*

[12] A Commentary on Herodotus Books I–IV, ed. by O. Murray, A. Moreno, Oxford University Press. Inc., New York, 2007, p. 482; Dictionary of Greek and Roman Geography, ed. by W. Smith, v. II. Boston, 1857, p. 252.

[13] *Ա ր ի ա ն ո ս. Ալեքսանդրի արշավանքը.– Ալեքսանդր Մակեդոնացի (այսուհետև՝ Ա ր ի ա ն ո ս), Երևան, 1987, էջ 35:*

[14] С т р а б о н, с. 605, 607.

[15] T. B r y c e. The Routledge Handbook of the Peoples and Places of Ancient Western Asia, London, New York, 2009, pp. 7 – 8.

[16] P l i n y. XXXII, 121, p. 310. *Պլինիոս Ավագը իր գրքում հիշատակում է բազմաթիվ էոլական քաղաքներ (նույն տեղում, էջ 310–313):*

[17] *Հ ե ր ո դ ո տ ո ս. I, 6, 28: Տե՛ս նաև Ք ս ե ն ո փ ո ն. Կյուրոպեդիա, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 2000, էջ 241:*

[18] *Ք ս ե ն ո փ ո ն. Կյուրոպեդիա, էջ 355:*

սե, Նոր Բերդ (բառացի՝ Նոր պարիսպ, որը հիշտակում է նաև Ստրաբոնը[19]), Թեմնոս, Կիլլա, Նոտիոն, Այգիրոեսսա, Պիտանե, Այգայա[20], Մյուրինա, Գրյունեյա: Նախկինում էոլական քաղաքները տասներկուսն էին, որոնցից մեկը՝ Սմյուռնեն, ներկայիս Իզմիրի մոտ[21], նվաճում են հարևան հոնիացիները[22]: Էոլական քաղաքների մեջ իր նշանակությամբ ամենակարևոր քաղաքը Կյումեն էր, որը Էոլիսի կենտրոնն էր: Կյումեն՝ ներկայիս Նեմրութ Լիմանին, կառավարում էր պարսից արքայի կողմից նշանակված հյուպարքոսը[23], ով, հավանաբար, Էոլիսի՝ որպես վարչական միավորի ղեկավարն էր: Թուկիդիդեսը և Արիանոսը նույնպես Կյումեն համարում են էոլական քաղաք[24]: Արիանոսը, առանց քաղաքների անունները նշելու, գրում է, որ էոլական քաղաքները նվաճվում են Ալեքսանդր Մակեդոնացու կողմից[25]:

Կյուրոս Կրտսերը Հոնիայի, Էոլիսի և մերձակա երկրների կառավարիչ է նշանակում իր ընկերոջը՝ Տամոսին[26], որի կառավարման շրջանը համապատասխանում է I սատրապության տարածքին:

Աքեմենյան պետության կործանման ժամանակ Էոլիսը հիշատակվում է առանձին[27], ինչը խոսում է այն մասին, որ Էոլիսը Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ առանձին վարչական միավոր էր: Էոլական և հոնիական քաղաքներում Ալեքսանդրի զորավար Լիսիմաքոսը նախկին հարկերը վճարելու պայմանով պետք է վերականգներ դեմոկրատական կարգերը և հին օրենքները[28]:

Մինչև Աքեմենյան պետության անկումը մ. թ. ա. IV դարի սկզբին էոլական Թեմնոսը, Այգայոսը և այլն հիշատակվում են որպես քաղաքներ, որոնք կարող

---

[19] С т р а б о н, с. 582.

[20] *Էոլական փոքրիկ քաղաք Այգայան հիշատակում է Պլուտարքոսը (տե՛ս* П л у т а р х. с. 238*).*

[21] A Commentary on Herodotus Books I–IV, p. 179.

[22] *Հ ե ր ո դ ո տ ո ս. I, 149: Այգայան նույնանում է ներկայիս Նեմրութ Քալեսիին՝ Պերգամոնից 35 կմ դեպի հարավ, Գրյունեյան՝ Թեմաշալիկ Բուրնուին, Մյուրինան գտնվել է Պերգամոնից 37 կմ դեպի հարավ, Լարիսեն տեղադրվում է Իզմիրից 28 կմ դեպի հյուսիս գտնվող Բուրունջուկ գյուղի կամ վերջինիցս արևելք ընկած Յանիքքյոյի մոտ, Նոտիոնը գտնվել է Սմյուռնեից 55 կմ դեպի հարավ և հաճախ նույնացվում է Կոլոփոնի հետ, Պիտանեն տեղադրվում է Կայկոսի գետաբերանի մոտ (տե՛ս* T. B r y c e. *Նշվ. աշխ., էջ 7, 262, 409, 489, 514, 562), Այգիրոեսսան թերևս, գտնվել է Լեսբոսում, Նոր Բերդը՝ Նեոնթեյխոսը, գտնվել է Հերմոսի և Լարիսեի միջև, Թեմնոսը նույնանում է ներկայիս Մենեմենի հետ (տե՛ս* Dictionary of Greek and Roman Geography, ed. by W. Smith, v. I, Boston, 1854, p. 35; Dictionary of Greek and Roman Geography, v. II, pp. 418, 1124*): Կիլլան հիշատակվում է «Իլիական»-ում (տե՛ս Հ ո մ ե ր ո ս. Իլիական, հին հունարեն բնագրից թարգմանեց Հ. Համբարձումյան, Երևան, 1955, I, 37) և գտնվել է Անտանդրոսի մոտ (տե՛ս* J. A. C r a m e r. Geographical and Historical Description of Asia Minor, vol. I. Oxford, 1832, p. 130*):*

[23] *Հ ե ր ո դ ո տ ո ս. VII, 194: Հմմտ.* C h. T u p l i n. The Administration of the Achaemenid Empire, in Coinage and Administration in the Athenian and Persian Empires.– "The Ninth Oxford Symposium on Coinage and Monetary History". Oxford. 1987, p. 127.

[24] Ф у к и д и д, с. 141; *Ա ր ի ա ն ո ս, էջ 48:*

[25] *Ա ր ի ա ն ո ս, էջ 36:*

[26] *Դ ի ո դ ո ր ո ս Ս ի կ ի լ ի ա ց ի. Պատմական գրադարան* (*այսուհետև՝ Դ ի ո դ ո ր ո ս Ս ի կ ի լ ի ա ց ի*), *թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1985, էջ 57:*

[27] *Ռ ո ւ փ ո ս. Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը.– Ալեքսանդր Մակեդոնացի, էջ 327:*

[28] A. T. O l m s t e a d. History of the Persian Empire, Third Impression. Chicago, 1960, p. 499.

են գոյատևել՝ չլինելով պարսից արքայի հպատակության տակ[29]: Այս տեղեկությունը հիմք է տվել ենթադրելու, թե պարսից իշխանությունը Էոլիսում մ. թ. ա. IV դարի սկզբին իրականում չկար[30]: Մ. թ. ա. 399 թվականին սպարտական զորավար Դերկյուլիդասը, գրավելով Լարիսսան, Համակսիտոսը, Կոլոնայը, առաջարկում է էոլական քաղաքների իշխանություններին դաշնակցել իր հետ և դառնալ ազատ[31]: Հարկավ, մ. թ. ա. IV դարի սկզբին պարսից իշխանությունը Փոքր Ասիայում ենթարկվում էր անընդմեջ փորձությունների, ինչը պայմանավորված էր հույների հետ անվերջ պատերազմներով: Սակայն չի բացառվում, որ Թեմնոսին, Այգայոսին վերևում մեջբերված տեղեկությունը վերաբերում է այն հարցին, որ նշված քաղաքները, ինչպես նաև այլ քաղաքներ, ունեցել են «սրբազան և անձեռնմխելի» լինելու իրավունք, ինչը շնորհվում էր պարսից արքայի կողմից: Այս իրողությունը լայն տարածում է ստանում հելլենիստական ժամանակաշրջանում:

Հերոդոտոսը նաև հայտնում է, որ Իդայի վրա գտնվող էոլական բնակավայրերն առանձնացած են[32], այսինքն՝ պատմիչի մոտ Էոլիան համապատասխանում է միայն տասնմեկ քաղաքների միությանը: Մեկ այլ տեղեկության մեջ ևս Հերոդոտոսը կրկնում է, որ էոլիացիները բնակվել են Իլիոնի երկրում[33], ինչը խոսում է այն մասին, որ Իլիոնում ապրող էոլիացիները վարչական առումով դուրս են գտնվել I սատրապության կազմում հիշատակվող էոլիացիների վարչական տարածքից: Էոլիացիները բնակվել են նաև Լեսբոսում[34], ընդ որում՝ Սկիլաքս Կարիանդացին Լեսբոսը համարում է էոլական կղզի[35]: Էոլիացիներին ավելի ուշ նվաճում է մեդացի Հարպագոսը՝ ենթարկելով պարսից իշխանությանը[36]:

Քսերքսեսի՝ Հելլադա արշավող բանակի կազմում նախկինում պելասգներ կոչվող էոլիացիները տրամադրել էին տասնվեց նավ և զինված էին հելլենների նման[37]: Դիոդորոս Սիկիլիացին էոլիացիների, լեսբոսցիների և տենեդոսցիների նավերի քանակը հաշվում է քառասուն[38], այսինքն՝ նկատի ունի ամբողջ

---

[29] К с е н о ф о н т. Греческая история (*այսուհետև՝* К с е н о ф о н т), пер. С. Лурье. М., 2010, с. 364.

[30] V. S a r a k i n s k i. The Fallacy of the European Satrapy.– "Živa Antika", 60, 2010, № 1–2, p. 90.

[31] К с е н о ф о н т, с. 307. *Հմմտ. Ք ս ե ն ո փ ո ն. Անաբասիս, էջ 127,* R. S e a g e r, C h. T u p l i n. The Freedom of the Greeks of Asia: on the Origins of a Concept and the Creation of a Slogan.– "Journal of Hellenic Studies", vol. 100, 1980, p. 144.

[32] *Հ ե ր ո դ ո տ ո ս, I, 151:*

[33] *Նույն տեղում, V, 122:*

[34] *Նույն տեղում, VI, 8:*

[35] С к и л а к К а р и а н д с к и й. Перипл обитаемого моря (*այսուհետև՝* С к и л а к К а р и а н д с к и й).–«Вестник древней истории», 1988, ¹ 2, с. 261. *Հեկատեոս Միլեթացին Լադե կղզին՝ Միլեթի դիմաց, համարում է էոլական (տե՛ս* C. M Ƒ l l e r. Fragmenta historicorum graecorum, v. I, Parisiis. 1841, fr. 226, p. 15*), հետևաբար, ենթադրելի է, որ էոլիացիները հարավային ուղղությամբ շարժվել էին բավականին հեռու:*

[36] *Հ ե ր ո դ ո տ ո ս, I, 171:*

[37] *Նույն տեղում, VII, 95:*

[38] Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, vol. II, Lipsiae, 1826, XI, 4, p. 7.

Էոլիդա վարչական միավորի տարածքը, քանի որ Տենեդոսը և Լեսբոսը համարվել են էոլական տարածքներ[39]:

Էոլիդայից հարավ գտնվել են Հոնիան, Կարիան և Լյուկիան[40]: Էոլիացիների իշխանությունը, ըստ Ստրաբոնի, հնագույն ժամանակներում տարածվել է Տրովադայի վրա[41]: Էոլիդայի և Հոնիայի սահմանը սկսվում էր Փոկայա քաղաքից[42], որը Հոնիայի սկիզբն էր հյուսիսում: Ստրաբոնը հաղորդում է, որ էոլական գաղութները ձգվում էին հյուսիսում՝ Կյուզիկոսից, հարավում՝ մինչև Կայկոս և նույնիսկ մինչև Հերմոս գետը[43]: Էոլական գաղութացման ժամանակ Տրովադան մտնում էր Էոլիդայի կամ Էոլիսի տարածքի մեջ, որը տարածվում էր Աբյուդոսից Կյումե[44]: Ստրաբոնն իր ժամանակաշրջանի բուն Էոլիդան հասցնում էր Հերմոս գետից մինչև Լեկտե[45] ՝ ներկայիս Բաբան[46]: Թուկիդիդեսը Անտանդրոսի բնակիչներին համարում էր ծագումով էոլիացիներ[47]:

Ստրաբոնի համաձայն՝ էոլիացիները գաղթել են Թրակիայից և հաստատվել Կյումեում: Նրանք կարողանում են պարտության մատնել Տրոյական պատերազմից թուլացած պելասգներին և գրավել Լարիսսա քաղաքը: Ստրաբոնը հիշատակում է նաև Թեմնոսը, Այգայան, Մյուրինան, Գրյունեյան, Պիտանեն[48]:

Քսենոփոնը հայտնում է, որ Էոլիսը վարչական առումով գտնվում էր Փոքր կամ Հելլեսպոնտոսյան Փռյուգիայի սատրապ Փառնաբազոսի գերագույն հրամանատարության տակ, ընդ որում՝ էոլիացիներն ունեին իրենց սատրապը՝ Զենիսը, որի հիմնական պարտականությունը հարկերի գանձումն էր: Հետաքրքիր է, որ Էոլիսի սատրապին նշանակում էր Փառնաբազոսը. Զենիսից հետո սատրապ է նշանակում նրա կնոջը՝ Մանիային[49]: Նոր սատրապը կարողանում է իր տիրույթներին միացնել Լարիսսան, Համակսիտոսը՝ ներկայիս Գյուլփինարը, և Կոլոնայը՝ ներկայիս Բեշիկթեփեն, որոնք նախկինում նրան չէին ենթարկվում: Սկիլաքս Կարիանդացու տեղեկությունները ցույց են տալիս, որ Լարիսսան, Կոլոնայը, Համակսիտոսը վաղ ժամանակներում մտնում էին Տրովադայի մեջ[50], հետևաբար Մանիան նշված քաղաքները գրավում է

---

[39] *Հերոդոտոս, I, 151,* Thucydides, History of the Peloponnesian War, with an English translation by Ch. F. Smith, v. IV, books VII–VIII. London, Cambridge, Massachusetts, 1958, Loeb Classical Library, VII, LVII, 5, p. 112. *Տենեդոսը հիշատակվում է դեռևս «Իլիական»-ում (տե՛ս Հոմերոս. Իլիական, I, 37):*

[40] Страбон, с. 124, 129, 146.

[41] *Նույն տեղում, էջ 530:*

[42] *Նույն տեղում, էջ 544:*

[43] *Նույն տեղում, էջ 545, 563:*

[44] *Նույն տեղում, էջ 545:*

[45] *Նույն տեղում, էջ 549, Հոմերոս. Իլիական, XIV, 280:*

[46] Dictionary of Greek and Roman Geography, ed. by W. Smith, v. II, p. 153; J. A. Cramer. *Նշվ. աշխ., էջ 117:*

[47] Фукидид, с. 453. *Տե՛ս նաև* Скилак Кариандский, с. 261.

[48] Страбон, с. 583.

[49] М. А. Дандамаев, В. Г. Луконин. Культура и экономика древнего Ирана. М., 1980, с. 117.

[50] Скилак Кариандский, с. 261; Thucydides. History of the Peloponnesian War, VIII, CI, 3, p. 380. *Պլինիոս Ավագը Համակսիտոսը կամ էլ վերջինիցս հարավ ընկած Լեկտեն համարում էր Տրովադայի սկիզբը հարավում (տե՛ս* Pliny. XXXII, 123, p. 312; XXXIII, 124, p. 312*):*

Տրովադայից: Մանիային էին ենթարկվում նաև Սկեպսիսը (Կուրշունլութեփե), Գերգիթան (Յիրչէ), Նեանդրիան (Չիգրի Դաղ), Իլիոնը, Կոկիլիոնը (Կարան)[51]: Էոլիսը վարչական առումով ավելի ուշ դուրս է գալիս Փառնաբազոսի ենթակայությունից և անցնում Տիսսափեռնեսին, սակայն Էոլիսը հետագայում կրկին անցնում է Փառնաբազոսին[52]:

Քսենոփոնը «Անաբասիս» երկում մի առիթով կողք կողքի նշում է «Էոլիսը, Փոյուգիան (Հելլեսպոնտոսյան Փոյուգիա – Հ. Խ.), Տրովադան և Փառնաբազոսի իշխանության տակ գտնվող ամբողջ երկիրը»[53]: Քսենոփոնի՝ վերևում բերված տեղեկություններից պարզվեց, որ «Անաբասիս»-ի տվյալ հաղորդման մեջ հիշատակվող երկրները գտնվել են Փառնաբազոսի գերագույն ռազմական հրամանատարության տակ, իսկ որպես սատրապ՝ Փառնաբազոսը կառավարում էր Հելլեսպոնտոսյան Փոյուգիան և Բյութանիան: Մ. թ. ա. 389 թվականին Սպարտան կարողանում է Փառնաբազոսից խլել էոլական քաղաքները[54]:

Էոլական քաղաքները հիշատակվում են մ. թ. ա. 454–453, 450–449, 447–446 թվականների աթենական հարկացուցակներում՝ հելլեսպոնտական, կարիական և հոնիական փորոսների մեջ[55]:

Մ. թ. ա. IV դարի սկզբին Էոլիսի կառավարիչը սեփական գանձարանում ուներ այնքան դրամ, որը բավական էր մեկ տարի շարունակ 8000 զինվոր պահելու համար[56]:

Միլյուացիներ*: Լյուկիացիների և պամփյուլիացիների միջև հիշատակվող միլյուացիները տեղադրվում են Միլյուաս երկրում, որը, ըստ ավանդության, գրավում են լյուկիացիները: Միլյուասցիների հին անվանումն էր սոլյումներ[57]: Վերջիններիս Ստրաբոնը հիշատակում է առանձին՝ չնույնացնելով միլյուացիներին[58]: Չնայած մեկ այլ տեղեկության մեջ ամասիացի աշխարհագետը միլյուացիներին նույնացնում է տերմիլների՝ լյուկիացիների և սոլյումների հետ[59]: Ստրաբոնը սոլյումներ համարում է Կաբալիայի բնակիչներին և թերմեսոսցիներին[60], այսինքն՝ նկատի ունի ոչ թե Լյուկիայի արևմուտքում գտնվող Կաբալիան, այլ Թերմեսոսը հարակից շրջաններով ընդգրկող Կաբալիան, որին հարավից և հարավ-արևմուտքից սահմանակցել է Միլյուասը: Ստրաբոնի տեղեկություններից երևում է, որ Միլյուասը գտնվել է Պիսիդիայից հարավ, Պամփյուլիայից արևելք[61]: Միլյուասը Պամփյուլիայի հարևանությամբ հիշատակում է նաև Պոլիբիոսը[62]:*

---

[51] К с е н о ф о н т, с. 306.

[52] *Նույն տեղում, էջ 313, 371:*

[53] *Ք ս ե ն ո փ ո ն. Անաբասիս, էջ 127:*

[54] A. T. O l m s t e a d. *Նշվ. աշխ., էջ 393:*

[55] "The Athenian Tribute Lists", by B. D. Meritt, H. T. Wade-Gery, M. F. McGregor, vol. III. Princeton, New Jersey, 1950, pp. 20–28, 53, 56.

[56] М. А. Д а н д а м а е в, В. Г. Л у к о н и н. *Նշվ. աշխ., էջ 204:*

[57] *Հ ե ր ո դ ո տ ո ս, I, 173:*

[58] С т р а б о н, с. 520.

[59] *Նույն տեղում, էջ 536:*

[60] *Նույն տեղում, էջ 591:*

[61] *Նույն տեղում, էջ 627:*

[62] P o l y b i u s. The Histories, vol. III, with an English translation by W. R. Paton, Cambridge–Massachusetts–London, 1979, V, 77, p. 190.

Քսերքսեսի բանակի կազմում միլյուացիները և կաբալները գտնվում են Հյուստանեսի որդի Բադրեսի հրամանատարության տակ, ընդ որում՝ միլյուացիների մի մասը զինված էր լյուկիական աղեղներով[63]: Միլյուասը նվաճվում է Ալեքսանդր Մակեդոնացու կողմից[64]:

Պամփյուլիացիներ*: Պամփյուլիա հունարեն նշանակում է «բոլոր ցեղերի բնակավայր, հավաքատեղի»[65]: Պամփյուլիացիները խոսել են հունարենի առանձին բարբառով, որը կապված է կիպրիերենի և արկադիերենի հետ՝ պարունակելով նաև անատոլիական լեզվի ազդեցությունը[66]: Ըստ Դիոդորոս Սիկիլիացու՝ առասպելական Նինոսի հետ նույնացվող Կյուրոս Մեծը նվաճում է Պամփյուլիան[67]: Վերջինս տեղադրվում է I սատրապության ծայր արևելքում: Կյուրոս Կրտսերը Հոնիայի, Էոլիսի և մերձակա երկրների կառավարիչ է նշանակում իր ընկերոջը՝ Տամոսին[68]:*

Հերոդոտոսը պամփյուլիացիներին համարում է տրոյական գաղթականներ, որոնք Քսերքսեսի՝ Հելլադա արշավող նավատորմում ունեին երեսուն նավ և զինված էին հելլենական զենքերով[69]: Պամփյուլիայում են գտնվել Էվրիմեդոնտ և Կատարակտես գետերը[70]:

Ստրաբոնը Պամփյուլիայի սկիզբը ծայր հարավ-արևմուտքում համարում է Քելիդոնիոն կղզին, ինչը, անկասկած, վերաբերում է հեղինակի ժամանակներին, իսկ ընդհանրապես Պամփյուլիան տեղադրում է Լյուկիայի և Կիլիկիայի միջև՝ արևելքում հասցնելով մինչև Կիլիկիա Տրաքեա[71]: Ստրաբոնը նշում է նաև Պամփյուլական ծովը[72], որն արևելքում միանում է Կիլիկյան ծովին[73]: Անտիկ աշխարհագետը գրում է, որ Պամփյուլիայի սկիզբը հարավ-արևմուտքում Փասելիս քաղաքից հյուսիս ընկած Օլբիա քաղաքն է՝ ներկայիս Կորուման, իսկ հարավ-արևելքում՝ Կորակեսիան[74]՝ ներկայիս Ալանյան: Պլինիոս Ավագը Պամփյուլիայի վերջին կետը ծովափին համարում է Փասելիսը[75], ինչն ուշ շրջանի իրողություն է: Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո Պամփյուլիան, Լյուկիան, Մեծ Փռյուգիան անցնում են Անտիգոնոսի կառավարմանը[76]:

---

[63] *Հ ե ր ո դ ո տ ո ս, VII, 77:*

[64] A. T. O l m s t e a d. *Նշվ. աշխ., էջ 500:*

[65] J. A. C r a m e r. Geographical and Historical Description of Asia Minor, vol. II, Oxford, 1832, p. 273.

[66] T. B r y c e. *Նշվ. աշխ., էջ 523:*

[67] *Դ ի ո դ ո ր ո ս Սի կ ի լ ի ա ց ի, էջ 17:*

[68] Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, vol. I, pars I, Lipsiae, 1828, XIV, 19, p. 826.

[69] *Հ ե ր ո դ ո տ ո ս, VII, 91: Դիոդորոս Սիկիլիացին պամփյուլիացիների նավատորմը հաշվում է 40 նավ (տե՛ս* Diodori Bibliotheca Historica, vol. II, XI, 4, p. 7*):*

[70] Ф у к и д и д, с. 52; P l i n y, XXVI, 96, p. 292. *Պամփյուլական բազմաթիվ քաղաքներ և գետեր հիշատակվում են Հեկատեոս Միլեթացու կողմից (տե՛ս* C. M ℧ l l e r. Fragmenta historicorum graecorum, v. I, Parisiis,1841, fr. 243–250, pp. 16–17*):*

[71] С т р а б о н, с. 125, 491, 592, 620.

[72] *Նույն տեղում, էջ 535:*

[73] P l i n y. XXVI, 96, p. 292.

[74] С т р а б о н, с. 623–624.

[75] P l i n y. XXVI, 96, p. 292.

[76] *Դ ի ո դ ո ր ո ս Սի կ ի լ ի ա ց ի, էջ 110:*

Մ. թ. ա. 362–361 թվականներին պամփյուլիացիները նույնպես միանում են հակապարսկական ապստամբությանը[77]:

Այսպիսով, մագնեսյաններին, էոլիացիներին, միլյուացիներին, պամփյուլիացիներին վերաբերող հին աղբյուրների տեղեկությունների քննությունը ցույց է տալիս, որ սրանցից յուրաքանչյուրի նկատմամբ պարսից արքունիքը հաստատում էր կառավարման այնպիսի համակարգ, որը պայմանավորված էր I սատրապության ձևավորման տեղական առանձնահատկություններով: Մյուս կողմից էլ, ի վերջո, Աքեմենյանների նպատակն էր առավելագույնս արդյունավետ կազմակերպել հարկատվության գործը և հաջողությամբ պաշտպանել Փոքր Ասիան բալկանյան հույների հարձակումներից:

ОБ АДМИНИСТРАТИВНОМ ДЕЛЕНИИ I САТРАПИИ АХЕМЕНИДСКОЙ ПЕРСИИ

ОГАННЕС ХОРИКЯН

Резюме

Исследование древних источников, касающихся азиатских магнетов, эолийцев, милиев, памфилов, показывает, что в отношении каждого из них персидский двор устанавливал такую систему правления, которая была обусловлена местными особенностями формирования I сатрапии. С другой стороны, в конце концов, целью Ахеменидов была эффективная организация налогового дела и усиленная защита Малой Азии от вторжений балканских греков.

ON THE ADMINISTRATIVE DIVISION OF THE I SATRAPY OF ACHAEMENID PERSIA

HOVHANNES KHORIKYAN

Summary

The examination of old sources related to the Magnesians of Asia, the Aeolians, the Milyans and the Pamphylians shows that the Persian Royal Court was establishing such a management system for each of them which was related to the local features of the establishment of the I Satrapy. On the other hand, the Achaemenians eventually aimed at more effective organization of the taxation case and successful defence of Asia Minor from the attacks of the Balkan Greeks.

[77] *Նույն տեղում, էջ 75:*